

Մանրածախ Հաստատությունների Արձանագրություն՝ Հավելված Բ Ուժի մեջ է մտնելու. **Հինգշաբթի, 2021թ.-ի Մայիսի 6-ի առավոտյան ժամը 12:01** -ին

Վերջին թարմացումներ. (Փոփոխությունները նշված են դեղինով)

5/5/2021. Թարմացվել են մաքրության պահանջները՝ CDC-ի մաքրության թարմացված ուղեցույցին համապատասխանելու համար: Թարմացվել են հիվանդության հետևանքով վճարովի արձակուրդի եզրույթները: Թարմացվել են ստուգումների պահանջները:

COVID-19 դեպքերի մակարդակը, հոսպիտալացումը և մահվան դեպքերը **որոշակիորեն նվազել են և հաստատուն են թվում**, բայց COVID-19-ը շարունակում է մեծ վտանգ առաջացնել համայնքների համար և բոլոր մարդկանցից և ձեռնարկություններից պահանջում է նախազգուշական միջոցներ ձեռնարկել և փոփոխել գործառնություններն ու գործողությունները՝ տարածման վտանգը նվազեցնելու համար:

Լոս Անջելեսի Շրջանի՝ Անվտանգ Տնտեսության Նահանգային Ծրագրի «**Դեղին** Մակարդակ» մուտք գործելու պատճառով այս արձանագրությունը թարմացվել է՝ վերացնելու որոշ տեղական գործունեության հատուկ սահմանափակումներ: Հաստատությունները պետք է զգուշորեն վարվեն և պահպանեն սույն արձանագրության պահանջները՝ իրենց բիզնեսում COVID-19-ի հավանական տարածումը նվազեցնելու համար:

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է փուլային մոտեցում՝ աջակցությամբ գիտության և հանրային առողջապահության փորձագիտության թույլատրելով որոշ մանրածախ բիզնեսների ապահով վերաբացումը:

Մանրածախ Ձեռնարկությունները պետք է սահմանափակվեն 75% առավելագույն ներքին զբաղվածությամբ: Զբաղվածությունը հիմնված է տվյալ Շինության Օրենսգրքի, կամ Հրդեհային Օրենսգրքի կիրառելի դրույթների հիման վրա:

Խնդրում ենք նկատի ունենալ, այս փաստաթուղթը կարող է թարմացվել՝ կախված լրացուցիչ տեղեկությունների և ռեսուրսների հասանելիությունից, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես Շրջանի կայքը <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է.

- (1) Աշխատավայրերի կանոնադրություններ և գործելակերպեր՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ
- (4) Աշխատակիցների և հանրության հետ հաղորդակցություն
- (5) Կարևոր ծառայությունների հավասար հասանելիության միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է կիրառվեն, եթե ձեր հաստատությունը մշակի որևէ վերաբացման արձանագրություններ:

Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր մանրածախ բիզնեսները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրել, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում չի վերաբերում իրենց բիզնեսին:

Բիզնեսի Անուն.

Հաստատության Հասցե.

Առավելագույն Ձրադրվածություն՝ ըստ
Շինության կամ Հրդեհային Օրենսգրքի.

Տեղադրման Ամսաթիվ.

**A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ՝ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ
(ՆՇԵՔ ԲՈՒՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)**

- Բոլոր նրանք, ովքեր կարող են իրենց պարտականությունները կատարել տնից, հանձնարարվել է անել այդպես:
- Խոցելի աշխատակիցներին (65 տարեկանից բարձր տարիքի և քրոնիկ առողջական խնդիրներ ունեցող) հանձնարարվում է այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից:
- Բոլոր աշխատակիցներին ասվել է հիվանդ ժամանակ չգնալ աշխատանքի: Աշխատակիցները գիտակցում են, որ անհրաժեշտ է հետևել (DPH) Հանրային Առողջապահության Վարչության ինքնամեկուսացման և կարանտինի ուղեցույցին, եթե կիրառելի է: Աշխատավայրի բացակայության կանոնադրությունը վերանայվել և փոփոխվել է՝ ապահովելու, որ աշխատողները չտուժեն, եթե հիվանդության հետևանքով մնան տանը:
- Իրականացվում են մուտքի ստուգումներ, նախքան աշխատակիցները, վաճառողները և առաքման աշխատակազմը կմտնեն աշխատավայր՝ համաձայն [LACDPH-ի Մուտքի Ստուգումների Ուղեցույցի](#): Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության և ջերմության կամ դողի ստուգում, և պարզաբանում այն մասին, թե արդյոք այդ պահին անձին կարգադրված է մեկուսանալ կամ կարանտին պահպանել: Այս ստուգումները կարող են իրականացվել աշխատակցի ժամանման պահին կամ այլընտրանքային այնպիսի մեթոդներով, ինչպիսիք են համակարգում առցանց ստուգումը կամ հաստատության մուտքի մոտ տեղադրված ցուցանակի միջոցով, որում նշվում է, որ այդ ախտանիշներով աշխատողները չպետք է մուտք գործեն տարածք: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի նաև ջերմաչափում:
 - Բացասական Ստուգում (Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
 - Դրական Ստուգում (Թույլատրված չէ):
 - Եթե անձը լիովին պատվաստված չէ՝ COVID-19-ի դեմ և վերջին 10 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է

¹ Մարդիկ համարվում են COVID-19-ի դեմ լիովին պատվաստված երկու (2) կամ ավելի շաբաթ հետո, երբ նրանք ստացել են երկփուլ դեղաչափերի երկրորդ չափաբաժինը (օրինակ՝ Pfizer-BioNTech կամ Moderna), կամ երկու (2) կամ ավելի շաբաթ հետո, երբ նրանք ստացել են մեկ դեղաչափ պատվաստանյութ (օրինակ՝ Johnson and Johnson [J&J]/Janssen):

գտնել՝ ph.lacounty.gov/covidquarantine:

- Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել՝ ph.lacounty.gov/covidisolation:

- ❑ Աշխատակիցներին տրամադրվում է տեղեկատվություն գործատուի, կամ պետության կողմից հովանավորվող բացակայության նպաստների մասին, որոնք աշխատակիցը միզուցե իրավունք ունենա ստանալու, որը ֆինանսապես կհեշտացնի տանը մնալը: Տես հավելյալ տեղեկություններ՝ հիվանդության հետևանքով բացակայությունների աջակցության [կարավարության ծրագրերի](#) և COVID-19-ի հետ կապված աշխատակիցների փոխհատուցումների մասին՝ ներառյալ աշխատողների հիվանդության հետևանքով բացակայությունների իրավունքները [2021թ.-ի COVID-19 Հիվանդության Հիմքով Լրացուցիչ Արձակուրդի Վճարման Օրենքի](#) ներքո:
- ❑ Աշխատանքային գործընթացները հնարավորինս վերաձևակերպվում են՝ մեծացնելու աշխատակիցների տնից աշխատելու հնարավորությունները:
- ❑ Տեղեկանալու դեպքում, որ մեկ կամ ավելի աշխատակիցներ թեստի դրական արդյունքներ, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշներ ունեն, գործատուն ունի պատրաստ ծրագիր կամ արձանագրություն՝ այդ անձ(անց)ին տանը ինքնամեկուսացնելու, ինչպես նաև պահանջելու անհապաղ ինքնա-կարանտին բոլոր այն աշխատողներից, ովքեր աշխատանքի վայրում շփվել են այդ անձ(անց)ի հետ: Գործատուի ծրագրով պետք է նախատեսվի արձանագրություն, ըստ որի բոլոր հնարավոր վարակված աշխատակիցները կթեստավորվեն, կամ հնարավորություն կունենան թեստավորվելու COVID-19-ի համար՝ որոշելու, թե արդյոք աշխատավայրում եղել են այլ վարակվողներ, որը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ: Տես՝ Հանրային Առողջապահության ուղեցույցը [Աշխատավայրում COVID-19-ին արձագանքելու վերաբերյալ](#):
- ❑ Աշխատավայրի ներսում 14 օրվա ընթացքում 3 կամ ավելի հաստատված դեպքերի պարագայում, գործատուն պետք է Հանրային Առողջապահության Վարչությանը տեղեկացնի այս խմբի մասին՝ զանգահարելով (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարներին, կամ առցանց www.redcap.link/covidreport: Եթե բռնկումը հայտնաբերվում է աշխատանքային վայրում, ապա Հանրային Առողջապահության Վարչությունը մեկնարկում է բռնկման արձագանքելու քայլեր, որը ներառում է վարակի դեմ պայքարի ցուցումների և առաջարկների տրամադրում, տեխնիկական աջակցություն և տեղանքին հատուկ վերահսկողության միջոցառումներ: Հանրային առողջապահության կառավարիչը կստանձնի բռնկման հետաքննությունը՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է [համապատասխան դիմակ](#), որը ծածկում է քիթը և բերանը: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս LAC DPH COVID-19-ի Դիմակների կայքէջը՝ <http://publichealth.lacounty.gov/acd/ncorona2019/masks>: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու, կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի դիմակներ, պետք է կրեն ներքևի եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կգակի տակ: Միակողմանի փականներ ունեցող

դիմակները չպետք է կիրառվեն: Բոլոր աշխատակիցները պետք է դիմակներ կրեն, բացառությամբ այն պահերի, երբ միայնակ աշխատում են անհատական գրասենյակներում, որոնց դռները փակ են, կամ երբ ուտում կամ խմում են: Նախկինում կատարված բացառությունը, որը վերաբերում էր աշխատողների հասակը գերազանցող ամուր միջնապատերով խցիկներում աշխատող աշխատողներին, փոխարինվում է մինչև հետագա ծանուցում:

- Դիմակների հետևողական և ճշգրիտ կիրառումն ապահովելու համար աշխատակիցներին արգելվում է ուտել կամ խմել՝ բացառությամբ իրենց ընդմիջումների ժամերին, երբ նրանք կարող են անվտանգ կերպով հանել իրենց դիմակները և մյուսներից ֆիզիկական հեռավորություն պահպանել: Ուտելիս կամ խմելիս աշխատակիցները պետք է մյուսներից առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն պահպանեն: Նախընտրելի է ուտել կամ խմել դրսում, և հնարավորության դեպքում մյուսներից հեռու: Խցիկում կամ աշխատավայրում ուտելը կամ խմելը ավելի նախընտրելի է, քան ընդմիջման սենյակում ուտելը, եթե խցիկում կամ աշխատավայրում ուտելը տրամադրում է մյուսներից ավելի շատ հեռավորություն և միջնապատեր: COVID-19-ի փոխանցումը ավելի հավանական է, որ տեղի կունենա այն ժամանակ, երբ աշխատակիցները միասին են և չեն կրում դիմակներ:
- Զբաղվածությունը կրճատվում է, և աշխատողների միջև տարածությունն առավելագույնի է հասցվում ցանկացած սենյակում կամ տարածքում, որն աշխատակիցներն օգտագործում են ճաշերի և/կամ ընդմիջումների համար: Այս պահանջին հնարավոր է հասնել հետևյալ կերպ.
 - Տեղադրելով ցուցատախտակի վրա առավելագույն զբաղվածությունը, որը համապատասխանում է ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում առնվազն վեց ոտնաչափ հեռավորության ապահովմանը.
 - Փոփոխել ընդմիջումների, կամ ճաշի ժամերը՝ նվազեցնելու ճաշերի և ընդմիջումների համար օգտագործվող սենյակներում կամ տարածքներում զբաղվածության թիվը, և
 - Սեղանները դնել առնվազն ութ ոտնաչափ հեռավորության վրա և ապահովել նստատեղերի միջև վեց ոտնաչափ հեռավորությունը, նստատեղերը հեռացնել, կամ ժապավեններ կացնել՝ նվազեցնելու զբաղվածությունը, հատակների վրա գծանշումներ անել՝ ապահովելու հեռավորությունը, և նստատեղերը դասավորել այնպես, որ նվազագույնի հասցվի դեմ առ դեմ շփումը: Միջնապատերի օգտագործումը խրախուսվում է՝ տարածման հետագա կանխարգելման համար, բայց այն չպետք է համարվի զբաղվածության կրճատման և ֆիզիկական հեռավորության պահպանման փոխարինող միջոց:
- Աշխատակիցներին հանձնարարվում է իրենց դիմակները լվանալ կամ փոխել ամեն օր:
- Գործատուները պետք է հաշվի առնեն, թե որ դեպքերում մեկանգամյա օգտագործման ձեռնոցների կիրառումը կարող է օգտակար լինել՝ ի հավելում հաճախակի ձեռքերը լվանալուն և ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործելուն; օրինակներն այն աշխատակիցների համար են, ովքեր ստուգում են մյուսների մոտ ախտանիշների առկայությունը, կամ մաքրում են հաճախակի հպվող իրերը:
- Բոլոր աշխատանքային վայրերը առանձնացված են առնվազն վեց ոտնաչափով:
- Բաշխման տարածքները (մայթերից ապրանքները վերցնելու-տանելու համար), ընդմիջումների սենյակները, պետքարաններն ու այլ ընդհանուր վայրերը ախտահանվում են **ստորև նշված հաճախականությամբ, սակայն ոչ ավելի քիչ, քան օրական մեկ անգամ** հետևյալ ժամանակացույցով.
 - Բաշխման տարածք _____

- Ընդմիջման սենյակներ _____
 - Պետքարաններ _____
 - Այլ _____
- Հաստատված ախտահանող և հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում.
-
- COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում.
-
- Աշխատակիցներին թույլ է տրվում կատարել հաճախակի ընդմիջումներ իրենց ձեռքերը լվանալու համար:
- Յուրաքանչյուր աշխատակցի բաժանվել է այս արձանագրության կրկնօրինակը:
- Ըստ հնարավորության, յուրաքանչյուր աշխատողի հատկացվում է իր սեփական գործիքները, սարքավորումները և աշխատելու համար սահմանված վայրը: Հաճախակի հպվող առարկաների համատեղ օգտագործումը հասցվում է նվազագույնի, կամ բացառվում է:
- Իրենց հերթափոխների ընթացքում, աշխատակիցներին տրամադրվում է ժամանակ մաքրման աշխատանքներ իրականացնելու համար: Մաքրման աշխատանքները պետք է նշանակվեն աշխատանքային ժամերի ընթացքում, որպես աշխատակցի աշխատանքային պարտականությունների մաս:
- Այս ստուգաթերթիկում նկարագրված բոլոր քաղաքականությունները, բացի նրանցից, որոնք կապված են աշխատանքի ընդունման պայմանների հետ, վերաբերում են նաև առաքման անձնակազմին և ցանկացած այլ ընկերություններին, որոնք կարող են տվյալ տարածքում գտնվել որպես երրորդ կողմ:
- Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրել այլ միջոցառումներ.

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Հաճախորդների թիվը մանրածախ առևտրի խանութում բավարար չափով քիչ է՝ ապահովելու մշտապես բոլոր հաճախորդների միջև ֆիզիկական հեռավորությունը, բայց ոչ մի դեպքում չի կարող լինել խանութի առավելագույն տարողունակության 75%-ից ավելի:
- Հաստատությունում հաճախորդների առավելագույն քանակը պետք է լինի _____
- Մանրածախ խանութը պետք է խստորեն և շարունակաբար հաշվի հաճախորդների մուտքն ու ելքը բոլոր մուտքերում, որպեսզի հետևի զբաղվածությանը՝ ապահովելու կարողության սահմանների համապատասխանությունը: Այն մանրածախ խանութները, որոնք անբավարար կերպով, կամ առանց հաշվելու կաշխատեն, կամ կգերազանցեն իրենց թույլատրելի կարողությանը, հանրային առողջապահության տեսուչի հայեցողությամբ կարող են ժամանակավորապես փակվել, մինչև այդ խնդիրները ուղղվեն՝ համաձայն տեղում կայացված հանրային առողջապահության տեսուչի որոշման: Հնարավորության դեպքում տրամադրեք մեկ, հստակ սահմանված մուտք և առանձին

Ելքեր՝ օգնելու պահպանել ֆիզիկական հեռավորություն:

- Պատրաստ եղեք հաճախորդներին դրսում կանգնեցնել հերթ՝ միաժամանակ պահպանելով ֆիզիկական հեռավորություն, ներառյալ կիրառելով տեսողական ցուցանակներ: Ըստ անհրաժեշտության դիմակ կրող աշխատակիցը (կամ աշխատակիցները, եթե մեկից ավելի մուտքեր կան) պետք է կանգնի դռան մոտ, սակայն առնվազն 6 ոտնաչափ հեռու ամենամոտ գտնվող հաճախորդներից, որպեսզի հետևի զբաղվածությանը, և եթե հաստատությունում հաճախորդների թիվը առավելագույնի է հասել, ուղղորդի հաճախորդներին շարք կանգնել դրսում՝ միմյանցից վեց ոտնաչափ հեռու:
- Տրամադրեք մեկ, հստակ սահմանված մուտք և առանձնացրեք ելք՝ օգնելու հնարավորինս պահպանելու ֆիզիկական հեռավորությունը:
- Միջոցառումներ են իրականացվում՝ աշխատակիցների և հաճախորդների միջև առնվազն վեց ոտնաչափ ֆիզիկական հեռավորության ապահովման համար: Մա կարող է ներառել՝ ֆիզիկական միջնապատերի կամ տեսողական ցուցանակների օգտագործում (օրինակ՝ հատակի գծանշում, գունավոր ժապավեն կամ նշաններ, որոնցով նշվում է, թե որտեղ պետք է աշխատողները և (կամ) աշխատակիցները կանգնեն):
- Գանձապահների և հաճախորդների միջև վարակը նվազագույնի հասցնելու համար, դրամարկդների մոտ միջոցառումներ են ձեռնարկվել, ինչպիսիք են՝ օրգանական ապակուց պատնեշները: Մտածեք օրգանական ապակուց արգելքների տեղադրման մասին հաստատության ցանկացած այլ տարածքում, որտեղ աշխատողների համար դժվար է պահպանել հաճախորդներից ֆիզիկական հեռավորությունը: Ցուցանակներ են փակցվել մուտքերի, վճարման շարքերի և դրամարկդների մոտ՝ հիշեցնելու հաճախորդներին պահպանել ֆիզիկական հեռավորություն:
- Կայնող ժապավենով կամ այլ նշումով սահմանեք հերթի սկիզբը՝ վճարման շարքի հաճախորդների համար և 6 ոտնաչափ տարածություն՝ հետագա մոտեցող հաճախորդների համար, ովքեր կմիանան շարքին:
- Աշխատակիցներին հանձնարարվել է խանութի ամբողջ տարածքում հաճախորդներից և միմյանցից պահպանել առնվազն վեց (6) ոտնաչափ հեռավորություն: Աշխատակիցները կարող են ակնթարթորեն մոտենալ, երբ դա անհրաժեշտ է՝ վճարումներն ընդունելու, ապրանքներ կամ ծառայություններ մատուցելու, կամ այլ անհրաժեշտության դեպքում:
- Աշխատակիցների գուզարաններից հաճախորդները չեն կարող օգտվել:
- Աշխատակիցների աշխատակայանները առանձնացված են առնվազն 6 ոտնաչափով, իսկ ընդհանուր տարածքները ձևափոխված են՝ սահմանափակելու աշխատողների հավաքությունները, որպեսզի առնվազն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն ապահովվի:
- Ֆիզիկական հեռավորության պահանջները իրականացվում են բեռնման տարածքներում, և առաքումների համար կիրառվում են առանց հպման ստորագրություններ:
- Աշխատակից չհանդիսացող բեռնատարների վարորդներից, առաքիչ գործակալներից, կամ միջնորդներից պահանջվում է մանրածախ հաստատություններ մտնել կտորե դիմակներով:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- HVAC համակարգը գտնվում է լավ, աշխատանքային վիճակում. առավելագույն հնարավորության չափով ավելացվել է օդափոխությունը: Արդյունավետ օդափոխությունը փոքր աերոզոլային փոխանցումը վերահսկելու ամենակարևոր միջոցներից մեկն է: Ցանկալի է տեղադրել բարձր արդյունավետությամբ օդը մաքրող շարժական սարքեր, արդիականացնել շինության օդային

գտիչները, փոխարինելով դրանք հնարավոր ամենաբարձր արդյունավետության գտիչներով, ինչպես նաև կատարել այլ փոփոխություններ՝ ավելացնելու համար դրսի օդի քանակը և օդափոխությունը գրասենյակներում ու այլ տարածքներում: Ավելի մանրամասն տեղեկությունների համար տե՛ս Կալիֆոռնիայի Հանրային Առողջապահության Վարչության [Ներքին միջավայրում օդափոխության, ֆիլտրման և օդի որակի միջանկյալ ուղեցույց](#): Խնդրում ենք նկատի ունենալ. Օդափոխումը և ներսի օդի որակի այլ բարելավումները լրացնում և չեն փոխարինում պարտադիր պաշտպանություններին, ներառյալ դեմքի ծածկոցներ կրելը (բացառությամբ բարձր վտանգի միջավայրերի, որոնք պահանջում են պատշաճ շնչառական պաշտպանություն), պահպանելով առնվազն վեց ոտնաչափ մարդկանց միջև հեռավորությունը, ձեռքերը հաճախակի լվանալը և սահմանափակող գործողությունները, որոնք համախմբում են տարբեր տնային տնտեսությունների մարդկանց:

- Առկա են առանց շփման վճարային համակարգեր, կամ եթե հնարավոր չէ, վճարային համակարգերը օրական առնվազն մեկ անգամ ախտահանվում են: Նկարագրեք.

- Ընդհանուր տարածքները և հաճախակի հավող իրերը հաճախորդների պատվերների վերցման և վճարման տարածքում (օր.՝ սեղաններ, դռների բռնակներ կամ բռնակներ, վարկային քարտերը կարդացող սարքեր, վերելակի կառավարման վահանակներ) աշխատանքային ժամերին ախտահանվում են օրական առնվազն մեկ անգամ՝ օգտագործելով [EPA-ի կողմից հաստատված ախտահանիչներ](#):
- Բարձրացնել մաքրումը և ախտահանումը այն մակերեսների համար, որոնք գտնվում են բարձր երթևեկության գոտիներում կամ այն մակերեսների համար, որոնք ենթարկվում են ազդեցության դիմակ չկրող անձանց կողմից:
- Աշխատանքային տարածքները և ամբողջ հաստատությունը մաքրվում են առնվազն օրը մեկ անգամ, ընդ որում՝ զուգարանները և հաճախակի հավող տարածքները/առարկաները մաքրվում են անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ, քան որոշված է, հաճախակի օգտագործման կամ դիմակ չկրող անձանց կողմից ազդեցության ենթարկվելու պատճառով:
- Հաստատության մոտակայքում, կամ մուտքի մոտ հանրությանը տրամադրվում է ձեռքերի ախտահանիչ միջոցներ, անձեռոցիկներ և աղբամաններ:
- Մանրածախ խանութի ժամերը հարմարեցվել են այնպես, որպեսզի բավարար ժամանակ հատկացվի կանոնավոր խորը մաքրման և արտադրանքի պահեստավորման համար: Դասավորեք պահեստավորման աշխատանքներն այնպես, որ աշխատակիցները գտնվեն տարբեր միջանցքներում:
- Հաստատություն ժամանող այցելուներին հիշեցվում են, որ հաստատությունում կամ դրա տարածքում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է կրել դիմակ: Մա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկան և ավելի մեծ երեխաներին: Միայն այն անձինք, ում հրահանգվել է իրենց բժշկական մատակարարի կողմից չկրել դիմակ, պետք է կրեն դեմքի վահան՝ ներքնի եզրին շղարշով, որպեսզի համապատասխանեն Նահանգային հրահանգներին, քանի դեռ նրանց վիճակը դա թույլ է տալիս: Կզակի տակ գրկող շղարշը նախընտրելի է: Միակողմանի փականներով դիմակները չպետք է օգտագործվեն: Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դիմակ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:
- Իրականացվում է այցելուների ստուգումներ՝ նախքան այցելուները կարող են մտնել հաստատություն: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև ստուգում արդյոք տվյալ անձը տվյալ պահին մեկուսացման, կամ կարանտինի մեջ է: Այս ստուգումները կարող են

կատարվել անհատապես, կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով, կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշաններով, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է մտնեն տարածք:

- Ստուգման Բացասական Արդյունք (Մուտքը Թույլատրված է): Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը չունի ախտանիշ(ներ) և չի շփվել COVID-19-ով հայտնի հիվանդի հետ, ապա այդ օրվա համար նրա մուտքը կարող է թույլատրվել:
- Ստուգման Դրական Արդյունք (Մուտքը Թույլատրված չէ):
 - Եթե վերջին 10 օրվա ընթացքում անձը շփվել է COVID-19-ով հայտնի հիվանդի հետ կամ ներկայումս գտնվում է կարանտինային հրամանների տակ, ապա նա չի կարող մտնել տարածք, և նրան պետք է անհապաղ ուղարկել տուն՝ կարանտին պահպանելու: Տրամադրեք նրանց կարանտինի համար հրահանգները, որոնք կարելի է գտնել ph.lacounty.gov/covidquarantine :
 - Եթե անձն ունի վերը նշված ախտանիշներից որևէ մեկը կամ ներկայումս գտնվում է մեկուսացման հրամանների տակ, նա չի կարող մտնել կամ աշխատել տարածքում, և նրան պետք է անհապաղ տուն ուղարկել՝ տանը մեկուսանալու համար: Տրամադրեք նրանց մեկուսացման համար հրահանգները, որոնք կարելի է գտնել ph.lacounty.gov/covidisolation:

- Երեխաների հետ եկած հաճախորդները պետք է ապահովեն, որ իրենց երեխաները մնան ծնողքի կողքին, խուսափեն դիպչելուց որևէ այլ անձի, կամ որևէ իրի, որն իրենց չի պատկանում, և դիմակավորված լինեն, եթե տարիքը թույլ է տալիս:
- Խանութի ներսի բարերը, կշիռով գնումները և արտադրանքի նմուշառումը չեն գործում: Հասարակական նստատեղերը վերադասավորված են՝ ֆիզիկական հեռավորությունն ապահովելու համար:
- Հաճախորդներին հիշեցվում է, որ չի թույլատրվում ուտել կամ խմել մանրածախ հաստատությունում կամ ներսում գտնվելու ընթացքում:
- Որտեղ հնարավոր է, տեղադրվել են առանց հպվելու սարքեր, ներառյալ՝ շարժմանը զգայուն լույսեր, առանց հպման վճարային համակարգեր, օձառի և թղթե սրբիչների ավտոմատ դիսպենսերներ և ժամանակացույցային քարտերի համակարգեր:

Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրեք այլ միջոցառումներ (օր.՝ միայն տարեցներին սպասարկման ժամերի տրամադրում, ոչ-պիկային վաճառքների խրախուսում):

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Սույն արձանագրության կամ հաստատության թողարկած Լոս Անջելեսի Շրջանի COVID-19 Անվտանգության Համապատասխանության Վկայագրի կրկնօրինակը պետք է փակցված լինի հաստատության բոլոր հանրային մուտքերում: Լրացուցիչ տեղեկությունների կամ COVID-19-ի անվտանգության համապատասխանության ինքնավավերացման ծրագիրն ավարտելու համար այցելեք <http://publichealth.lacounty.gov/eh/covid19cert.htm>: Հաստատությունները, տեղում հաստատությունում, պետք է պահեն Արձանագրությունների պատճենը վերանայման համար՝ ըստ պահանջի:
- Մուտքի մոտ և/կամ այն վայրում, որտեղ հաճախորդները շարք են կանգնում, նշաններ փակցրեք՝

նախապես պատվիրելու և վճարելու առավելությունների վերաբերյալ:

- Տեղադրված են ցուցանակներ, որոնք հաճախորդներին հիշեցնում են պահպանել վեց (6) ոտնաչափ սոցիալական հեռավորություն, նախքան մտնելը լվանալ ձեռքերը կամ ախտահանիչ օգտագործել, հիվանդ լինելու, կամ COVID-19-ի ախտանիշներ ունենալու դեպքում տանը մնալ և հետևել առաջարկվող ծառայությունների փոփոխություններին: Նշանները պետք է տեղադրվեն հստակ տեսանելի վայրերում, ներառեն պատկերազարդեր և մատչելի լինեն թվային եղանակով (օրինակ՝ էլ. փոստով): Այս միջոցները հաղորդելու համար խրախուսվում է նաև հանրային հասցեների հայտարարությունների օգտագործումը: Տե՛ս [Շրջանի DPH COVID-19-ի ուղեցույցի կայքէջը](#) լրացուցիչ ռեսուրսների և բիզնեսների կողմից օգտագործվող ցուցանակների օրինակների համար:
- Հաստատության ամբողջ տարածքում նշաններ են, որոնք հաճախորդներին հիշեցնում են, որ ներսում չի թույլատրվում ուտել կամ խմել:
- Հաստատության առցանց վաճառքի պորտալները (վեբ կայք, սոցիալական մեդիա, և այլն) հստակ տեղեկատվություն են տրամադրում խանութի ժամերի, դիմակների օգտագործման անհրաժեշտության, նախապես պատվիրելու և վճարելու, պատվերը վերցնելու և/կամ առաքման և այլ նմանատիպ քաղաքականության վերաբերյալ:

E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Գնումների հատուկ ժամեր են հատկացվել խոցելի բնակչության, ներառյալ՝ տարեցների և առողջական խնդիրներ ունեցողների համար, եթե կիրառելի է, ցանկալի է հատկացնել դրանք անմիջապես լրիվ մաքրումից հետո:
- Հաճախորդների համար կարևոր նշանակություն ունեցող ծառայություններն առաջնահերթություն են ստացել:
- Գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են առաջարկվել հեռակա կարգով, դարձել են առցանց:
- Միջոցներ են ձեռնարկվել, որպեսզի շարժման սահմանափակումներ ունեցող և/կամ բարձր ռիսկի տակ գտնվող հաճախորդների համար հանրային վայրերում ապահովվի ապրանքների և ծառայությունների հասանելիություն:

Վերոհիշյալ միջոցառումներում չներառված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերի վրա, որոնք բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության մասին ցանկացած հարցի, կամ մեկնաբանության համար կարող եք կապվել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անուն՝

Հեռախոսահամար՝

Վերջին վերանայման ամսաթիվ՝
